Էդուարդ Իսաբեկյանի 28 գեղանկարչական կտավներ նվիրվեցին Երեւանին - «ԱՐՄԵՆՊՐԵՍ», 03.05.2013

Գեղանկարիչ Էդուարդ Իսաբեկյանի 28 գեղանկարչական աշխատանքները նվիրաբերվեցին Երեւան քաղաքին. գեղանկարչի մշտական ցուցասրահի բացման արարողությունը տեղի ունեցավ մայիսի 3-ին «ՀայԱրտ» մշակութային կենտրոնի հարեւանությամբ: **«Արմենպրես»**-ի փոխանցմամբ՝ լրագրողների հետ զրույցում Իսաբեկյանի որդին, Երեւանի Գեղարվեստի պետական ակադամիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը նշեց, որ ցուցասրահ բացելու գաղափարը առկա էր դեռ 2004 թ-ին, երբ նրա 90-ամյա հոբելյանի առթիվ ՀՀ նկարիչների միությունում բացվել էր հոբելյանական ցուցահանդեսը, որի բացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը եւ Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը:

«Կարծում եմ՝ հետաքրքիր ու սիմվոլիկ բան ստացվեց: Այն որոշումը, որի հիմքում 2004 թ-ին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կամքն էր, իրականացվում է 2013 թվականին ներկայիս քաղաքապետ Տարոն Մարգարյանի օրոք»,- նշեց Իսաբեկյանը՝ հավելելով, որ Էդուարդ Իսաբեկյանի եւ Անդրանիկ Մարգարյանի կենդանության օրոք այդ որոշումը կյանքի կոչելու հնարավորություն չեղավ: Իսաբեկյանի որդին շնորհակալություն հայտնեց Երեւանի նախկին եւ ներկա քաղաքապետերին տրամադրված տարածքի համար: «Համոզված եմ, որ այս ցուցահանդեսը կհամալրի այն հիանալի թանգարանների շարքը, որոնցով այսօր գեղեցկանում եւ հարստանում է մեր սիրելի Երեւանը»,- ավելացրեց Արվեստի վաստակավոր գործիչը:

«ՀայԱրտ» մշակութային կենտրոնի տնօրեն Ռիտա Շառոյանը նշեց, որ շատ տրամաբանական եւ հաճելի է, որ կենտրոնում տեղ է գտել Էդուարդ Իսաբեկյանի՝ հայ կերպարվեստում իր մնայում տեղը գտած արվեստագետը: «Քիչ առաջ դիտում էի նրա նկարները, անգամ դիմանկարների մեջ ես զգացի Իգդիրի համն ու բույրը, այսինքն այստեղ հանգրվանելու են մեր մեծ նահապետի իգդիրյան շնչով ստեղծված նկարները»,- ասաց նա:

Երեւանի քաղաքապետի խորհրդական Արամ Սուքիասյանը շնարհակալություն հայտնեց Արամ Իսաբեկյանին՝ Էդուարդ Իսաբեկյանի ահռելի, լուրջ ժառանգությունից 28 գեղեցիկ, արժեքավոր կտավները նվիրաբերելու համար: 28 գեղանկարչական աշխատանքների նվիրատվության արարողությանը ներկա էր Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, հասարակական, քաղաքական մշակութային բազմաթիվ գործիչներ, ինչպես նաեւ բազմաթիվ երեւանաբնակներ: Էդուարդ Հմայակի Իսաբեկյանը ծնվել է 1914 թվականի նոյեմբերի 8-ին Իգդիրում: ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ է: 1941-ին ավարտել է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիան: 1945-ից դասավանդում էր Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում, 1963-ից՝ որպես պրոֆեսոր:

https://armenpress.am/arm/news/717597/eduard-isabekyani-28-gexankarchakan-ktavner-nvirvecin-erevanin.html